ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում <<Համայնքային սեփականության հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2022 թվականի բյուջեում ծախսային մասում փոփոխություններ չեն սպասվում, իսկ եկամուտները կավելանան 624960 դրամով: